

Հաստատված է


«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»
ՓԲԸ Բաժնետերերի ընդհանուր
ժողովի կողմից 1995թ. սեպտեմբերի
19-ի որոշմամբ

Գրանցված է

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկում

Փոփոխված է

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»
ՓԲԸ Բաժնետերերի ընդհանուր
ժողովի կողմից 2021թ. ապրիլի 30-ի
որոշմամբ



Շաքե Մանուկյան
Ընկերության քարտուղար

Մարտին Գալստյան
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»
փակ բաժնետիրական ընկերություն
(նոր խմբագրություն)

Հոդված 1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» Փակ բաժնետիրական ընկերությունը (ստորև՝ Բանկ) իրավաբանական անձ է, որը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրված լիցենզիայի հիման վրա և համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության՝ իրավունք ունի բանկային գործունեություն իրականացնել ՀՀ տարածքում և նրանից դուրս:
- 1.2. Բանկը հիմնադրվել է փակ բաժնետիրական ընկերության կազմակերպա-իրավական ձևով «Միդլենդ Արմենիա Բանկ» ԲԸ անվանումով՝ համաձայն 1995թ. սեպտեմբերի 19-ի Հիմնադիր ժողովի որոշման (արձանագրություն թիվ 001), և 1999թ. մարտի 24-ին վերանվանվել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի: Բանկը կազմավորվել է և գործունեություն է իրականացնում «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան:
- 1.3. Բանկի պաշտոնական լրիվ անվանումն է. հայերեն՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերություն անգլերեն՝ “HSBC Bank Armenia” Closed Joint Stock Company Բանկի պաշտոնական կրճատ անվանումն է. հայերեն՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ անգլերեն՝ “HSBC Bank Armenia” CJSC
- 1.4. Բանկի իրավաբանական հասցեն է. Հայաստանի Հանրապետություն, 0009, ք. Երևան, Տերյան փողոց, 66 շենք
- 1.5. Բանկը հիմնադրված է անորոշ ժամկետով:
- 1.6. Բանկն իրավաբանական անձ է և ունի իր բաժնետերերի գույքից առանձնացված գույք, իրավունք ունի իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, ստանձնել պարտավորություններ և դատարանում հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող:
- 1.7. Բանկը պատասխանատվություն չի կրում իր բաժնետերերի պարտավորությունների համար, իսկ բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում Բանկի պարտավորությունների համար: Բանկի պարտավորությունների համար նրա բաժնետերերը պատասխանատվություն են կրում բաժնետոմսերի անվանական արժեքի սահմաններում:

Հոդված 2. Բանկի գործառնությունները

Բանկն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության տարածքում և դրանից դուրս բանկային գործունեություն, ինչպես նաև ֆինանսական գործառնություններ և դրանց հետ կապված կամ դրանցից բխող այլ գործունեություն իրականացնել, այդ թվում՝

ա) դրամական միջոցներ ընդունել ավանդների, վարկերի, ընթացիկ հաշիվների ձևով՝ առանց ապահովման կամ ապահովմամբ և տեղաբաշխել դրանք՝ վարկեր, ավանդներ տրամադրելու և/կամ ներդրումներ կատարելու միջոցով.

բ) տրամադրել վարկեր և փոխառություններ՝ ապահովմամբ կամ առանց ապահովման, իրականացնել ֆինանսական լիզինգի գործառնություններ, իրականացնել դրամական պահանջների զիջման դիմաց ֆինանսավորում (ֆակտորինգ).

գ) թողարկել, գնել, վաճառել կամ այլ կերպ սպասարկել արժեթղթեր և այլ գործիքներ, իր անունից և իր հաշվին արժեթղթերով, ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքներ կատարել, ինչպես նաև արժեթղթերում ներդրումներ կատարել.

դ) մատուցել ներդրումային և ոչ հիմնական ծառայություններ՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.

ե) օրենքով սահմանված պահանջները բավարարելու դեպքում իրականացնել ներդրումային ֆոնդի (ներառյալ՝ կենսաթոշակային ֆոնդի) պահառության գործունեություն.

զ) տրամադրել, մարել և վճարել վարկային նամակներ (ակրեդիտիվներ).

է) իրականացնել արտարժույթի և թանկարժեք մետաղների բանկային (ստանդարտացված) ճուլակտորների առուվաճառք.

ը) իրականացնել գույքի հավատարմագրային (լիազորագրային) կառավարում և ի պահ ընդունել դրամական միջոցներ, արժեթղթեր, փաստաթղթեր, թանկարժեք քարեր, մետաղներ և այլ արժեքներ.

թ) իրականացնել վճարահաշվարկային ծառայություններ, այդ թվում՝ բացել, վարել, սպասարկել բանկային հաշիվներ, ներառյալ՝ բանկերի թղթակցային հաշիվները.

ժ) տրամադրել բանկային երաշխիքներ.

ժա) իրականացնել ինվեստիցիոն և բաժանորդագրական գործունեություն, մատուցել ֆինանսական գործակալի ծառայություններ.

ժբ) մատուցել հաճախորդների վարկարժանության գնահատման ծառայություններ.

ժգ) իրականացնել պարտքերի հավաքման հետ կապված գործողություններ,

ժդ) իրացնել ապահովագրական վկայագրեր և (կամ) պայմանագրեր, օրենքով սահմանված կարգով իրականացնել ապահովագրական գործակալի գործառնություններ,
ժե) իրականացնել «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հաշվի օպերատորի գործառնություններ,
ժզ) իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ գործառնություններ:

Հոդված 3. Բանկի կանոնադրական հիմնադրամը

- 3.1. Բանկի հայտարարված կանոնադրական հիմնադրամը կազմում է 18 434 350 000 (տասնութ միլիարդ չորս հարյուր երեսունչորս միլիոն երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:
- 3.2. Բանկի հայտարարված կանոնադրական հիմնադրամը բաժանված է 609 400 (վեց հարյուր ինը հազար չորս հարյուր) սովորական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 30 250 (երեսուն հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ անվանական արժեքով:
- 3.3. Բանկի հայտարարված կանոնադրական հիմնադրամը համալրվում է ՀՀ դրամով:
- 3.4. Բանկի բաժնետոմսերի տեղաբաշխումը արտացոլվում է Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ օրենքով սահմանված կարգով:
- 3.5. Սույն կանոնադրության վերագրանցման պահին բաժնետոմսերը լրիվ վճարված են բաժնետերերի կողմից, և Բանկի փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամը կազմում է 18 434 350 000 (տասնութ միլիարդ չորս հարյուր երեսունչորս միլիոն երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:
- 3.6. Բաժնետոմսերը Բանկի բաժնետերերի միջև տեղաբաշխված են հետևյալ կերպ.
Էյչ-Էս-Բի-Սի Յուրլի Բի Վի – 426 580 (չորս հարյուր քսանվեց հազար հինգ հարյուր ութսուն) սովորական բաժնետոմս, որի համար վճարվել է 12 904 045 000 (տասներկու միլիարդ ինը հարյուր չորս միլիոն քառասունհինգ հազար) ՀՀ դրամ, և
Ուինգս Իստաբլիշմենթ – 182 820 (հարյուր ութսուներկու հազար ութ հարյուր քսան) սովորական բաժնետոմս, որի համար վճարվել է 5 530 305 000 (հինգ միլիարդ հինգ հարյուր երեսուն միլիոն երեք հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ:
- 3.7. Բանկը կարող է տեղաբաշխել քվեարկելու իրավունք տվող կամ առանց այդ իրավունքի արտոնյալ բաժնետոմսեր, ինչպես նաև լրացուցիչ տեղաբաշխել սովորական բաժնետոմսեր: Բանկն իրավունք ունի միաձուլել (կոնսոլիդացնել) տեղաբաշխված բաժնետոմսերը՝ ավելացնելով դրանց անվանական արժեքը, կամ բաժանել դրանք ավելի փոքր անվանական արժեքի բաժնետոմսերի:

- 3.8. Բանկի փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամը կարող է մեծացվել բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացմամբ կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ:
- 3.9. Բանկի փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամը չի կարող նվազեցվել, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Բանկը օրենքով սահմանված դեպքում և կարգով պարտավոր է բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով հետ գնել իրենց պատկանող բաժնետոմսերը կամ դրանց մի մասը:

Հոդված 4. Բաժնետերերի իրավունքները

- 4.1. Բանկի բաժնետերերն իրավունք ունեն՝
- ա) օրենքով և սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել Բանկի կառավարմանը.
 - բ) մասնակցել Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի վերաբերյալ առաջարկություններ անելու, քննարկումներին մասնակցելու և իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով քվեարկելու իրավունքով՝ այդ թվում լիազորված անձանց միջոցով.
 - գ) օրենքով սահմանված կարգով տեղեկություններ ստանալ Բանկի գործունեության վերաբերյալ և ծանոթանալ Բանկի հաշվապահական գրքերին, հաշվեկշռին, հաշվետվություններին և այլ փաստաթղթերին: Բաժնետերերը պարտավորվում են չհրապարակել Բանկի կառավարման և վերստուգման ընթացքում իրենց հայտնի դարձած այն տեղեկությունները, որոնք կազմում են բանկային կամ առևտրային գաղտնիք.
 - դ) մասնակցել շահույթի բաշխմանը, շահութաբաժիններ ստանալ Բանկի գործունեությունից առաջացած շահույթից.
 - ե) նախապատվության իրավունքով ձեռք բերել այլ բաժնետերերին պատկանող վաճառվող բաժնետոմսերը և առաջնահերթ կարգով ձեռք բերել Բանկի կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը՝ օրենքով և սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով.
 - զ) օրենքով և սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինել իրենց բաժնետոմսերը.
 - է) Բանկի լուծարման դեպքում օրենքով սահմանված կարգով ստանալ Բանկի գույքի իրենց հասանելիք մասը կամ դրա արժեքը.
 - ը) Բանկի կառավարման մարմինների, այդ թվում Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված՝ գործող օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև սույն Կանոնադրությանը հակասող որոշումների բողոքարկման նպատակով հայցով դիմել դատարան.

թ) իրականացնել ՀՀ օրենքներով և սույն Կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:

4.2. Բանկի յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի անվճար ստանալու Բանկի վերջին տարեկան հաշվետվության և արտաքին աուդիտի եզրակացության պատճենները:

Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 2%-ին և ավելին տիրապետող յուրաքանչյուր բաժնետիրոջ պահանջով Բանկը նրան պետք է անվճար տրամադրի օրենքով սահմանված տեղեկությունները: Տեղեկությունները բաժնետիրոջը տրամադրվում են բաժնետիրոջ գրավոր դիմումի հիման վրա՝ դիմումը Բանկ ներկայացնելու պահից հինգ օրվա ընթացքում:

Հոդված 5. Նախապատվության իրավունքը

5.1. Բաժնետոմսերի լրացուցիչ տեղաբաշխման դեպքում Բանկի բաժնետերերը օգտվում են կանոնադրական հիմնադրամում իրենց բաժնեմասին համամասն տեղաբաշխվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունքից:

5.2. Եթե լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերը՝ գնելու առաջարկի պահից 60 օրացուցային օրվա ընթացքում սույն հոդվածի 5.1. կետի համաձայն ձեռք չեն բերվել Բանկի բաժնետերերի կողմից, ապա Բանկի Խորհուրդը կարող է առաջարկել դրանք երրորդ անձանց՝ իր կողմից սահմանված պայմաններով (սակայն ոչ ավելի բարենպաստ պայմաններով, քան սահմանված են եղել բաժնետերերի համար):

5.3. Եթե Բանկի որևէ բաժնետեր օտարում է իր բաժնետոմսերը, ապա Բանկի մյուս բաժնետերերը օգտվում են վաճառվող բաժնետոմսերը իրենց բաժնեմասին համամասն ձեռք բերելու նախապատվության իրավունքից՝ այդ բաժնետոմսերի իրացման մասին ծանուցվելու պահից 60 օրացուցային օրվա ընթացքում: Եթե բաժնետիրոջ կողմից վաճառվող բաժնետոմսերը՝ գնելու առաջարկի պահից 60 օրացուցային օրվա ընթացքում ձեռք չեն բերվել Բանկի բաժնետերերի կողմից, ապա վաճառվող բաժնետոմսերի սեփականատերը կարող է առաջարկել դրանք երրորդ անձանց՝ իր կողմից սահմանված պայմաններով (սակայն ոչ ավելի բարենպաստ պայմաններով, քան սահմանված են եղել բաժնետերերի համար):

Հոդված 6. Բանկի կառավարման մարմինները

Բանկի կառավարման մարմիններն են՝

- Բաժնետերերի ընդհանուր ժողովը

- Խորհուրդը
- Գլխավոր գործադիր տնօրենը:

Հոդված 7. Բաժնետերերի ընդհանուր ժողովը

7.1. Բանկի կառավարման բարձրագույն մարմինը նրա Բաժնետերերի ընդհանուր ժողովն է:

7.2. Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում:

7.3. Անհետաձգելի հարցերի քննարկման համար կարող է գումարվել բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով: Արտահերթ ընդհանուր ժողովը կարող է անցկացվել հեռակա քվեարկության (հարցման) միջոցով:

Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է օրենքի պահանջներին համապատասխանող քվեաթերթիկների օգտագործմամբ: Քվեաթերթիկները ուղարկվում են բաժնետերերին էլեկտրոնային կամ փոստային եղանակով, որը նաև համարվում է ընդհանուր ժողովի մասին ծանուցում, բացառությամբ այն դեպքերի, երբ հեռակա քվեարկությամբ անցկացվող ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկված է Խորհրդի անդամի ընտրության հարցը: Նման դեպքում բաժնետերերը ծանուցվում են ընդհանուր ժողովի մասին՝ քվեաթերթիկները բաժնետերերին ուղարկելուց առնվազն յոթ օր առաջ:

Հեռակա քվեարկությամբ անցկացվող ընդհանուր ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել է Բանկի՝ ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին:

Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները տրամադրվում են բաժնետերերին՝ լրացրած քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունումն ավարտելու պահից առնվազն 30 օր առաջ: Բաժնետերերը լրացված քվեաթերթիկները ուղարկվում են Բանկ էլեկտրոնային կամ փոստային եղանակով:

7.4. Ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստում, որի ժամանակ ընդհանուր ժողովի մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի, էլեկտրոնային կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա քվեարկությամբ անցկացված նիստ չի համարվում:

Հեռախոսային, հեռուստակապի, էլեկտրոնային կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում անցկացվող ընդհանուր ժողովի վերաբերյալ ծանուցումն իրականացվում է սույն կանոնադրության 7.11. կետով սահմանված կարգով և ժամկետներում:

- 7.5. Բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝
- ա) Բանկի բաժնետերերը.
 - բ) Բանկի բաժնետեր չհանդիսացող Խորհրդի անդամները և Բանկի գլխավոր գործադիր տնօրենը՝ Խորհրդակցական ձայնի իրավունքով.
 - գ) Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման անդամները՝ որպես դիտորդ.
 - դ) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձը՝ որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունը առկա է գումարվող ընդհանուր ժողովի օրակարգի հարցերում).
 - ե) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ներկայացուցիչները՝ որպես դիտորդ.
 - զ) օրենքով նախատեսված այլ անձինք:
- 7.6. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բանկի մասնակիցների ցուցակը կազմվում է Խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ բանկի մասնակիցների ռեեստրի տվյալների հիման վրա: Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բանկի մասնակիցների ցուցակը ծանոթացման համար տրամադրվում է Բանկի այն բաժնետերերին, որոնք գրանցված են Բանկի բաժնետերերի ռեեստրում, վերջիններիս պահանջով: Բանկի բաժնետիրոջ պահանջով բանկը պարտավոր է նաև նրան տրամադրել տեղեկանք՝ ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակում նրա ընդգրկման մասին:
- 7.7. Բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում.
- ա) Բանկի կանոնադրության հաստատումը, ինչպես նաև կանոնադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելը, կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելը.
 - բ) Բանկի կանոնադրական հիմնադրամի փոփոխումը.
 - գ) Բանկի վերակազմակերպման ու լուծարման հարցերը, լուծարային հանձնաժողովի նշանակման, միջանկյալ, ամփոփ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը.
 - դ) Բանկի հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.
 - ե) Բանկի Խորհրդի քանակական կազմի հաստատումը, Խորհրդի անդամների ընտրությունը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, Խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը.
 - զ) Խորհրդի ներկայացմամբ Բանկի անկախ աուդիտն իրականացնող անձի հաստատումը.
 - է) Բանկի տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշռի, շահույթների և վնասների բաշխման, ինչպես նաև աուդիտորական եզրակացության հաստատումը.

ը) Բանկի կրած վնասների, կորուստների դիմաց պահուստավորման գումարի սահմանումը կամ այդպիսի վնասներ կրելու ռիսկի այլ կերպ ապահովումը.

թ) Բանկի տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը, տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի հաստատումը.

ժ) Բանկի գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ օրենքով սահմանված դեպքերում.

ժա) Բանկի գործարքներում շահագրգռվածություն ունեցող անձանց հետ գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ օրենքով սահմանված դեպքերում.

ժբ) Բանկի դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը, դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը, առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը.

ժգ) Սույն Կանոնադրությամբ և օրենքով սահմանված այլ լիազորություններ:

7.8. Վերը թվարկված լիազորությունները հանդիսանում են Բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունը, բացառությամբ “ժբ” կետով սահմանված լիազորությունների:

7.9. Բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավասու է, եթե ժողովին ներկա են Բանկի բաժնետերերը (կամ նրանց ներկայացուցիչները), որոնց պատկանում է Բանկի՝ ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի կեսից ավելին:

7.10. Բաժնետերերի ընդհանուր ժողովում որոշումներն ընդունվում են քվեարկելու իրավունք ունեցող բաժնետերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ ստորև շարադրված հարցերի, որոնց վերաբերյալ որոշումներն ընդունվում են ձայների երեք քառորդով.

ա) Կանոնադրության լրացումներն ու փոփոխությունները, նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը.

բ) Բանկի լուծարման կամ վերակազմակերպման մասին որոշման ընդունումը, ինչպես նաև լուծարային հանձնաժողովի նշանակումը, միջանկյալ, ամփոփ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը.

գ) Բանկի Խորհրդի անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

դ) Բանկի դուստր կամ կախյալ ընկերությունների հիմնադրումը, վերակազմակերպումը, լուծարումը.

ե) Բանկի գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված խոշոր գործարքների կնքման մասին որոշում ընդունելը՝ օրենքով սահմանված դեպքերում.

զ) Բանկի գործարքներում շահագրգռվածություն ունեցող անձանց հետ գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ օրենքով սահմանված դեպքերում.

է) Բանկի հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

ը) կանոնադրական հիմնադրամի նվազեցման վերաբերյալ որոշումների ընդունումը՝ օրենքով նախատեսված դեպքերում:

7.11. Բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցումը՝ էլեկտրոնային և/կամ փոստային եղանակով՝ պետք է ուղարկվի ընդհանուր ժողովից առնվազն յոթ օր առաջ: Արտահերթ ընդհանուր ժողովի գումարման համար բաժնետերերի ծանուցման առավել կարճ ժամկետ կարող է սահմանվել, եթե այդ մասին բաժնետերերի միջև համաձայնություն է կայացվել:

7.12. Յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի առաջարկություններ ներկայացնել տարեկան ընդհանուր ժողովի օրակարգի վերաբերյալ: Բաժնետերերի առաջարկած հարցերն ընդգրկվում են ընդհանուր ժողովի օրակարգում: Ընդհանուր ժողովը պարտավոր չէ քննարկել հարցեր, որոնք օրակարգում ընդգրկված չեն:

7.13. Քվեարկությունը Բաժնետերերի ընդհանուր ժողովում իրականացվում է «ձայնի իրավունք տվող մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով:

7.14. Բանկի բաժնետերերը Բաժնետերերի ընդհանուր ժողովում մասնակցելու իրենց իրավունքը կարող են իրականացնել անձամբ կամ գրավոր ձևով լիազորված ներկայացուցչի միջոցով: Բաժնետերերը կարող են լիազորություն տալ նաև այլ բաժնետերերին՝ ընդհանուր ժողովում իրենց անունից հանդես գալու համար:

7.15. Բաժնետերերի ընդհանուր ժողովներն արձանագրվում են Ընկերության քարտուղարի կողմից, ով պատասխանատու է ընկերության կորպորատիվ կառավարման պահանջներին համապատասխան ժողովների կազմակերպման և անցկացման համար: Ընդհանուր ժողովների արձանագրությունները ստորագրվում են (ներառյալ՝ էլեկտրոնային ստորագրությամբ կամ էլեկտրոնային հաստատմամբ) ընդհանուր ժողովի նախագահի և Ընկերության քարտուղարի կամ ընդհանուր ժողովին մասնակցած բաժնետերերի կամ նրանց ներկայացուցիչների կողմից, իսկ հեռակա քվեարկությամբ անցկացված ընդհանուր ժողովի դեպքում՝ քվեարկությանը մասնակցած բաժնետերերի կամ նրանց ներկայացուցիչների կողմից կամ ընդհանուր ժողովի նախագահի և Ընկերության քարտուղարի կողմից, իսկ արձանագրություններից քաղվածքները տրամադրվում և ստորագրվում են Ընկերության քարտուղարի կողմից:

Հոդված 8. Բանկի խորհուրդը

- 8.1. Բանկի խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:
- 8.2. Բանկի խորհրդի անդամներն ընտրվում են Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից մեկ տարի ժամկետով: Բանկի խորհրդի քանակական կազմը որոշվում է ընդհանուր ժողովի կողմից, բայց չի կարող հինգ անդամից պակաս և տասնհինգ անդամից ավել լինել:
- 8.3. Ընդհանուր ժողովին Բանկի խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել Բանկի բաժնետերերը, ինչպես նաև խորհուրդը, բացառությամբ առաջին անգամ խորհրդի ձևավորման դեպքի:
Բանկի բաժնետերերն իրենց կողմից խորհրդի անդամների թեկնածուներ առաջադրելու դեպքում այդ մասին գրավոր առաջարկությունը ներկայացնում են Բանկի խորհրդի նախագահին՝ ընդհանուր ժողովի կայացման օրվանից առնվազն երեք օր առաջ, իսկ հեռակա քվեարկությամբ ընդհանուր ժողովի դեպքում՝ լրացված քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ: Բանկի խորհուրդը խորհրդի անդամության թեկնածուներ առաջադրում է ընդհանուր ժողովի օրակարգում թեկնածուների առաջադրման հարցն ընդգրկելու միջոցով:
- 8.4. Բանկի այն բաժնետերերը, որոնք տիրապետում են Բանկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի մինչև 10 տոկոսին, կարող են միավորել իրենց բաժնետոմսերը և Բանկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսը համալրելու դեպքում՝ առանց ընդհանուր ժողովի կողմից ընտրության ընդգրկել իրենց ներկայացուցչին խորհրդի կազմում խմբի ստեղծման մասին պայմանագիր կնքելու միջոցով: Խմբի ստեղծման մասին պայմանագիրը կնքվում է օրենքի համաձայն՝ Բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարումից առնվազն 45 օր առաջ: Պայմանագրի պատճենները տրամադրվում են Բաժնետերերի ընդհանուր ժողովի բոլոր մասնակիցներին օրենքով սահմանված կարգով: Բանկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի մինչև 10 տոկոսին տիրապետող բաժնետերերը, որոնք չեն կնքել խմբի ստեղծման մասին պայմանագիրը (փոքր բաժնետերեր), իրավունք ունեն իրենց շահերը ներկայացնող ներկայացուցչին ընդգրկելու Բանկի խորհրդի կազմում: Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի ներկայացուցչն ընտրվում է ընդհանուր ժողովի նիստին ներկա փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի կողմից միաձայն:

- 8.5. Խորհրդի նախագահին ընտրվում է խորհրդի անդամների կազմից՝ նրանց ձայների պարզ մեծամասնությամբ: Խորհրդի անդամները չեն կարող Բանկում այլ պաշտոն զբաղեցնել:
- 8.6. Խորհրդի նախագահը՝
- ա) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,
 - բ) գումարում և նախագահում է խորհրդի նիստերը,
 - գ) կազմակերպում է Խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը,
 - դ) նախագահում է Բաժնետերերի ընդհանուր ժողովում,
 - ե) կազմակերպում է Խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքը:
- 8.7. Խորհրդի անդամների լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել՝ օրենքով նախատեսված դեպքերում: Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում հրավիրվում է բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով՝ օրենքի և սույն կանոնադրության համաձայն: Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը հաստատում է Խորհրդի անդամի լիազորությունների դադարեցումը և ընտրում Խորհրդի նոր անդամ՝ ընդհանուր ժողովին մասնակցող բաժնետերերի ձայների երեք քառորդով:
- 8.8. Խորհրդի իրավասությանն են պատկանում Բանկի ընդհանուր դեկավարմանը վերաբերող հարցերը, այդ թվում՝
- ա) Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը՝ ներառյալ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը.
 - բ) Բանկի Բաժնետերերի ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, դրանց օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը.
 - գ) Բանկի գույքի շուկայական արժեքի որոշումը՝ օրենքով սահմանված դեպքերում.
 - դ) Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկում ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.
 - ե) Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի և կատարողականի հաստատումը.
 - զ) Բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատմանը Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը և Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի վարձատրության չափի սահմանումը.

է) Բանկի բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ Բաժնետերերի ընդհանուր ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը և միջանկյալ շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը.

ը) Պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

թ) Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը.

ժ) Բանկի գույքի փոխանցման հետ կապված խոշոր և շահագրգռվածության առկայությամբ կնքվող գործարքների կնքումը՝ օրենքով նախատեսված դեպքերում.

ժա) Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի, աշխատատեղերի հաստատումը և կադրային քաղաքականության որոշումը, բացառությամբ Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Գլխավոր գործադիր տնօրենին վերապահված հաստատումները.

ժբ) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և ընդհանուր ժողովին ներկայացումը.

ժգ) Բանկի տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը և կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութային պարտականությունների բաշխումը.

ժդ) Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը.

ժե) Բանկի կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը, այդ թվում ֆինանսական գործառնությունների և վերահսկողության իրականացման կանոնակարգերի հաստատումը.

ժզ) Բանկի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հիմնումը, վերակազմակերպումը և լուծարումը.

ժէ) Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի, ինչպես նաև Գլխավոր գործադիր տնօրենի ներկայացմամբ՝ Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալի և Գլխավոր հաշվապահի նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.

ժը) առևտրային կազմակերպությունների միություններին մասնակցությունը.

ժթ) Բաժնետերերի ընդհանուր ժողովի ոչ բացառիկ իրավասությանը վերապահված այլ հարցեր, որոնք ընդհանուր ժողովի որոշմամբ ժամանակ առ ժամանակ կփոխանցվեն Բանկի Խորհրդի իրավասությանը.

ժզ) օրենքով նախատեսված այլ որոշումների ընդունումը:

- 8.9. Սույն կանոնադրության 8.8. կետի “ա” – “ժը” ենթակետերում թվարկված որոշումների ընդունումը հանդիսանում է Խորհրդի բացառիկ իրավասությունը:
- 8.10. Խորհուրդը իրավասու է, եթե նիստին ներկա են Խորհրդի անդամների մեծամասնությունը:
- 8.11. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա Խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, բացառությամբ 8.8 կետի “ժ” ենթակետում նախատեսված խոշոր գործարքների կնքման դեպքերի, որոնց վերաբերյալ որոշումներն ընդունվում են միաձայն:
- 8.12. Բանկի Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ:
- 8.13. Խորհրդի նիստի մասին ծանուցումը՝ էլեկտրոնային կամ փոստային եղանակով պետք է ուղարկվի Խորհրդի անդամներին նիստից առնվազն յոթ օր առաջ: Հրատապ հարցերի շուրջ որոշումներ կայացնելու անհրաժեշտության դեպքում Խորհրդի նիստի մասին ծանուցումը կարող է ուղարկվել նաև ավելի կարճ ժամկետում:
- 8.14. Խորհրդի որոշումները կարող են ընդունվել հեռակա քվեարկության (հարցման) միջոցով:
 Հեռակա քվեարկությունը իրականացվում է Խորհրդի անդամներին էլեկտրոնային փոստի միջոցով հարցումներ ուղարկելու և դրանց վերաբերյալ պատասխաններ ստանալու միջոցով:
 Հեռակա քվեարկությամբ անցկացվող Խորհրդի որոշումը համարվում է ընդունված, եթե «կողմ» է քվեարկել Խորհրդի անդամների մեծամասնությունը: Հեռակա քվեարկության արդյունքներով կազմվում է Խորհրդի որոշման փաստաթղթային տարբերակ, որը ստորագրվում է Գլխավոր գործադիր տնօրենի և/կամ Ընկերության քարտուղարի կողմից:
- 8.15. Խորհուրդը կարող է որոշումներ ընդունել այնպիսի նիստում, որի ժամանակ Խորհրդի նիստի բոլոր մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային կապի, հեռուստակապի, էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա կարգով անցկացված նիստ չի համարվում:
 Հեռախոսային, հեռուստակապի, էլեկտրոնային կամ այլ կապի միջոցով անցկացվող Խորհրդի նիստի վերաբերյալ ծանուցումն իրականացվում է սույն կանոնադրության 8.13. կետով սահմանված կարգով և ժամկետներում:
- 8.16. Խորհրդի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի առաջարկություններ ներկայացնել Խորհրդի նիստի օրակարգի վերաբերյալ, մասնակցել քննարկումներին և քվեարկել սահմանված կարգով:
- 8.17. Քվեարկությունը Բանկի Խորհրդի նիստում իրականացվում է «մեկ անդամ մեկ ձայն» սկզբունքով:

8.18. Առնվազն տարին մեկ անգամ Բանկի Խորհուրդն իր նիստում քննարկում է արտաքին աուդիտն իրականացնող անձի հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը), ինչպես նաև քննարկում և անհրաժեշտության դեպքում վերանայում է Բանկի գործունեության հիմնական ուղղությունները, ռազմավարությունը, կարգերն ու ներքին իրավական այլ ակտերը:

Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը) քննարկվում է հաշվետվությունը Բանկ ներկայացվելուց հետո առաջիկա Խորհրդի նիստում: Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացուցիչները հրավիրվում են Խորհրդի նիստին՝ նշված հարցի քննարկմանը մասնակցելու նպատակով:

8.19. Առնվազն եռամսյակը մեկ անգամ Բանկի Խորհուրդը իր նիստում քննարկում է Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման, Գլխավոր գործադիր տնօրենի և Գլխավոր հաշվապահի հաշվետվությունները: Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը, Գլխավոր գործադիր տնօրենը և Գլխավոր հաշվապահը իրենց հաշվետվությունները ներկայացնում են Խորհրդին՝ Խորհրդի համապատասխան նիստից առնվազն յոթ օր առաջ: Հաշվետվությունների քննարկմանը մասնակցում են Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը, Գլխավոր գործադիր տնօրենը, Գլխավոր ֆինանսական տնօրենը և Գլխավոր հաշվապահը: Քննարկման արդյունքում Խորհուրդը կարող է համապատասխան հանձնարարականներ տալ ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարին, Գլխավոր գործադիր տնօրենին և Գլխավոր ֆինանսական տնօրենին և/կամ Գլխավոր հաշվապահին:

8.20. Խորհրդի նիստերը արձանագրվում են ընկերության քարտուղարի կողմից, ով պատասխանատու է ընկերության կորպորատիվ կառավարման պահանջներին համապատասխան նիստերի կազմակերպման և անցկացման համար: Խորհրդի որոշումներից կամ նիստերի արձանագրություններից քաղվածքները տրամադրվում և ստորագրվում են Ընկերության քարտուղարի կողմից:

8.21. Խորհուրդը կարող է ստեղծել Խորհրդին կից հանձնաժողովներ: Խորհրդին կից հանձնաժողովներում կարող են ընդգրկվել Խորհրդի անդամները, ինչպես նաև Խորհրդի կողմից նշանակված Բանկի այլ ղեկավարները և աշխատակիցները: Խորհրդին կից հանձնաժողովներն ունեն Խորհրդակցական գործառույթներ: Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը կամ այլ անդամը հրավիրվում է Խորհրդին կից հանձնաժողովների նիստերին:

Հոդված 9. Բանկի Գլխավոր գործադիր տնօրենը

- 9.1. Բանկի գործունեության ընթացիկ ղեկավարումը իրականացնում է Գլխավոր գործադիր տնօրենը: Բանկում տնօրինություն չի ստեղծվում: Գլխավոր գործադիր տնօրենը նշանակվում է Խորհրդի կողմից: Բանկի մյուս ղեկավարները նշանակվում են Գլխավոր գործադիր տնօրենի կողմից, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
- 9.2. Գլխավոր գործադիր տնօրենի իրավասությանն են պատկանում բոլոր այն հարցերը, որոնք օրենքով կամ սույն կանոնադրությամբ չեն հանդիսանում Բաժնետերերի ընդհանուր ժողովի, Խորհրդի, ներքին աուդիտի ստորաբաժանման կամ Գլխավոր հաշվապահի իրավասությունը:
- 9.3. Գլխավոր գործադիր տնօրենը՝
- ա) Բանկը ներկայացնում է երրորդ անձանց հետ հարաբերություններում, պետական կազմակերպություններում, դատական և այլ մարմիններում.
 - բ) տնօրինում է Բանկի գույքը և ֆինանսական միջոցները, գործարքներ և պայմանագրեր է կնքում Բանկի անունից.
 - գ) աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Բանկի աշխատողներին, կնքում է աշխատանքային պայմանագրեր.
 - դ) գործում է առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր.
 - ե) իրականացնում է օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:
- 9.4. Գլխավոր գործադիր տնօրենի բացակայությամբ Գլխավոր գործադիր տնօրենի պարտականություններն իրականացնում է Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալը, իսկ վերջինիս բացակայությամբ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ Բանկի մեկ այլ ղեկավար՝ համաձայն լիազորությունների փոխանցման պատշաճ արձանագրության:

Հ ո դ վ ա ծ 10. Բանկի ներքին աուդիտը

- 10.1. Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման (այսուհետ՝ ներքին աուդիտ) ղեկավարը և անդամները նշանակվում են Բանկի Խորհրդի կողմից:
- 10.2. Ներքին աուդիտը՝
- ա) անկախ գնահատական է տալիս Բանկի ներքին հսկողության, այդ թվում՝ ռիսկերի կառավարման համակարգերի, բանկի կառավարման համակարգի և գործընթացների որակի, համարժեքության և արդյունավետության վերաբերյալ.
 - բ) եզրակացություններ և առաջարկություններ է տալիս Բանկի Խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ:

- 10.3. Ներքին աուդիտի ստորաբաժանման անդամները կարող են մասնակցել Խորհրդի նիստերին և նրանց տրամադրվում են Խորհրդի նիստերի արձանագրությունների պատճենները:
- 10.4. Ներքին աուդիտի ղեկավարը Խորհրդին և Գլխավոր գործադիր տնօրենին ներկայացնում է հերթական և արտահերթ հաշվետվություններ՝ օրենքով սահմանված կարգով:
- 10.5. Օրենքների և այլ իրավական ակտերի խախտումներ հայտնաբերելու դեպքում ներքին աուդիտը Խորհրդին է ներկայացնում հաշվետվություն՝ միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներ: Խորհուրդը կարող է քննարկել ներքին աուդիտի հաշվետվությունը Խորհրդի նիստում և համապատասխան հանձնարարականներ տալ Բանկի ղեկավարներին:

Հոդված 11. Բանկի մասնաճյուղերը և ներկայացուցչությունները

- 11.1. Բանկը կարող է Հայաստանի Հանրապետությունում և նրա տարածքից դուրս հիմնել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 11.2. Բանկի մասնաճյուղերը և ներկայացուցչությունները չունեն իրավաբանական անձի կարգավիճակ և գործում են Բանկի անունից՝ վերջինիս կողմից տրված լիազորությունների սահմաններում և հաստատված կանոնադրության հիման վրա:

Հոդված 12. Ֆինանսական դրույթներ

- 12.1. Բանկում հաշվապահական հաշվետվությունն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության:
- 12.2. Բանկի ֆինանսական տարին համընկնում է օրացուցային տարվա հետ:
- 12.3. Բանկի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնում է Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից նշանակված անկախ աուդիտորական կազմակերպությունը:
- 12.4. Բանկը ստեղծում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահուստային հիմնադրամներ:
- 12.5. Բանկի զուտ շահույթը կարող է օգտագործվել շահութաբաժինների վճարման, Բանկի գործունեության և պահուստային հիմնադրամին կատարվող մասհանումների նպատակով:

12.6. Բանկի Գլխավոր հաշվապահին իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:

Բանկի Գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում բանկի հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև բանկի բաժնետերերին, պարտատերերին և մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցներին Բանկի մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 13. Բանկի լուծարումը

- 13.1. Բանկը կարող է լուծարվել օրենքով նախատեսված հիմքերով և կարգով:
- 13.2. Բանկի ինքնալուծարումն իրականացվում է Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ՝ համաձայն գործող օրենսդրության:
- 13.3. Բանկի ինքնալուծարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 13.4. Լուծարային հանձնաժողովն ընտրվում է Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ առնվազն երեք անդամի կազմով:
- 13.5. Պարտատերերի և արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերի հանդեպ ունեցած պարտավորությունների մարումից հետո մնացած լուծարային միջոցները բաշխվում են բաժնետերերի միջև՝ նրանց բաժնեմասին համամասնորեն:

Հոդված 14. Եզրափակիչ դրույթներ

- 14.1. Սույն Կանոնադրությունը կազմված է երեք հայերեն օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:
- 14.2. Սույն Կանոնադրությունն ուժի մեջ է պետական գրանցման պահից: